



11.06. 2015 թվականին ՔՀԿ օր Ազգային ժողովում միջոցառման շրջանակներում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները հանդիպում ունեցան ՀՀ ազգային ժողովի գյուղատնտեսության և բնապահպանության հարցերով մշտական հանձնաժողովի անդամների հետ, որի ընթացքում բարձրացվեցին մի շարք բնապահպանական խնդիրներ և հնչեցին առաջարկություններ: Աշխատանքային հանդիպմանը մասնակցեց նաև «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի տնօրեն Օլեգ Դուլգարյանը: Վերջինս իր ելույթի ընթացքում մանրամասնորեն ներկայացրեց Մեծ Այրումի «Նահատակ» արդյունաբերական պոչամբարի խնդիրը, ինչպես նաև Մեծ Այրում համայնքի բնակիչների մտահոգությունները կապված նոր պոչամբարի կառուցման հարցի հետ: Նա նշեց, որ նախ չեն գործում վերահսկողական մեխանիզմները, որոնք կոչված են ապահովելու գործող պոչամբարների շահագործումը ստանդարտներին համապատասխան: Օլեգ Դուլգարյանը նշեց նաև , որ անհրաժեշտ է բերել օրենսդրական նախաձեռնություն,

որի պարագայում Մեծ Այրում համայնքը և նմանատիպ համայնքները, որոնց վարչական տարածքներում տեղակայված են արդյունաբերական պոչամբարները ճանաչվեն , որպես ազդակիր համայնքներ և ստանան բնապահպանական և առողջապահական խնդիրները մեղմացնելու համար պետական սուբվենցիաներ, որից հետո ԱԺ պատգամավորներին ներկայացրեց առաջարկություններ և համայնքի բնակիչների պահանջները: ԱԺ պատգամավորները նշեցին, որ իրենք ևս շատ մտահոգված են այս խնդրով: ԱԺ գյուղատնտեսական և բնապահպանության հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ Մարտուն Գրիգորյանը նախ նշեց, որ բոլոր խնդիրները սկսում են այնտեղ, երբ համայնքում տեղական իշխանությունների կողմից ընդունվում են որոշումներ և միայն հետո համայնքի բնակիչները սկսում են բարձրաձայնել խնդրի մասին: Պատգամավորը հավելեց նաև, որ որոշումները պետք է արտահայտեն համայնքի բնակիչների դիրքորոշումը և խորհուրդ տվեց համայնքի բնակիչներին, որոնք համաձայն չեն տեղական մակարդակում ընդունված որոշումների հետ, օրենքով սահմանված կարգով հետևողական լինեն իրենց պահանջներին, հարկ եղած դեպքում համայնքի բնակիչը կարող է ընդհուպ անվստահությունը հայտնել տեղական իշխանություններին: Այնուհետև հանձնաժողովի նախագահը տեղեկացրեց , որ Մեծ Այրում համայնքի բնակիչների կողմից ստացված բաց նամակում շարադրված պահանջները և առաջարկությունները քննարկվել են հանձնաժողովում, պատգամավորը հավաստիացրեց, որ շուտով առաջիկա նիստերից մեկի օրակարգ կմտնի պոչամբար ունեցող համայնքներին բնապահպանական և առողջապահական փոխհատուցման առաջարկությունը, որի քննարկման արդյունքում պարզ կդառնա օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության հարցը : Քննարկման մասնակիցներին բաժանվեցին տեղեկատվական նյութեր Մեծ Այրումի «Նահատակ» պոչամբարի մասին, որից հետո քննարկման կողմերի միջև ձեռք բերվեց պայմանավորվածություն այս և այլ հարցերի շուրջ հետագա համագործակցության համար:

